ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքային ենթակայության րթական հաստատությունների տեղական վճարների արտոնություններ սահմանելու և Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի N 257-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագծի

Որոշման նախագծի ընդունումը բխում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածից, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասից, համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում Նաիրի համայնքի «Եղվարդի N 1 մսուր-մանկապարտեզ», «Եղվարդի N 2 մսուր-մանկապարտեզ», «Զովունիի մանկապարտեզ», «Զորավանի մանկապարտեզ», «Պռոշյանի «Պարոնյանի անվան մանկապարտեզ»», «Քասախի «Արուսյակ» մանկապարտեզ», «Բուժականի մանկապարտեզ», «Արագյուղի մանկապարտեզ», «Պռոշյանի մսուր-մանկապարտեզ», «Եղվարդի արվեստի դպրոց», «Քասախի արվեստի դպրոց», «Զովունիի երաժշտական դպրոց», «Եղվարդի մշակույթի տուն», «Պռոշյանի Կարոտ Մկրտչյանի անվան մշակույթի կենտրոն», «Զովունիի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց հավաքագրվող տեղական վճարների արտոնություններ սահմանելու մասին որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Համայնքային ենթակայության կրթական հաստատությունների տեղական վճարների արտոնություններ սահմանելու և Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի N 257-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագծի

Համայնքային ենթակայության կրթական հաստատությունների տեղական վճարների արտոնություններ սահմանելու և Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի N 257-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագծի ընդունումը համայնքի 2025 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի ենթադրում: